ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

Սաղմոսավանի համայնքապետարան
093 – 27 – 93 - 57
Թիվ 1

ՀՀ Արագածոտնի մարզպետ
պարոն Գ.Գյոզալյանին

Ձեզ ենք ներկայացնում Սաղմոսավան համայնքի ավագանու 2017թ. 10 հունվարի թիվ 1,2,3,4 որոշումները, կից հավելվածների:

Համայնքի ղեկավար Ե.Ավագյան

Ելք
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ... -թյան ընդհ... բաժին
«24» 01 17թ.
Մուտք № 7/547-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Սաղմոսավան համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

10-ը հունվարի 2017թ. N 1

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի զարգացման քառամյա ծրագիրը և ղեկավարվելով ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով ու «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով Սաղմոսավան համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Սաղմոսավան համայնքի 2017թ. բյուջեն՝ համաձայն կից հավելված 1-ով:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Միքայելյան

Մ.Մլոյան

Մ.Թադևոսյան

Սաղմոսավան համայնքի ղեկավար Ն.Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Սաղմոսավան համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

10-ը հունվարի 2017թ. N 2

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵ-ՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅ-ՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետով Սաղմոսավան համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Սաղմոսավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Սիքայելյան

Ս.Սլոյան

Մ.Թադևոսյան

Սաղմոսավան համայնքի ղեկավար Ն.Ավագյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան
համայնքի ավագանու
2017 թ. հունվարի 10 -ի N 2 որոշման

# ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 5
Աշխատակազմի կառուցվածքը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ 5

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավոր | Պաշտոնային դրույքաչափ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 100000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար 1.2.1 | 1 | 81000 |
| Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 80000 |
| Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 80000 |
| Առաջատար մասնագետ 3.1-3 | 1 | 80000 |
| Ընդամենը ամսեկան | 5 | 421000 |

Սաղմոսավան համայնքի ղեկավար Ն.Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Սաղմոսավան համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

10—ը հունվարի 2017թ. N 3

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետով Սաղմոսավան համայնքի ավագանին`

ՈՐՈՇՈՒՄ Է`

1.Հաստատել Սաղմոսավան գյուղական համայնքի ղեկավարի 2017թ. ամսեկան դրույքաչափը սահմանել 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Միքայելյան

Ս.Սլոյան

Մ.Թադևոսյան

Սաղմոսավան համայնքի ղեկավար Ն.Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Սաղմոսավան համայնք

# ՈՐՈՇՈՒՄ

10-ը հունվարի 2017թ. N 4

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-ր հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետով, հիմք ընդունելով »Տեղական տուրքերի վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով Սաղմոսավան համայնքի ավա գանին՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել համայնքի տարածքում 2017թ. տեղական տուրքերի վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ- 3 Դեմ- 0 Ձեռնպահ - 0

Լ. Միքայելյան

Ս.Սլոյան

Մ. Թադևոսյան

Սաղմոսավան համայնքի ղեկավար Ն.Ավագյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան
համայնքի ավագանու
2017թ. հունվարի 10-ի N 4 որոշման

# ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

**3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝**

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3500 դրամ.

**4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ** տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0 դրամ:

Սաղմոսավան համայնքի ղեկավար Ն.Ավագյան